



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 50831 20 03 2019թ.

## ՌԻՍՄԱՆ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով

հրամայում եմ՝

### 1. Սահմանել, որ՝

1.1. ԵՊՀ ուսանողներն իրավունք ունեն կիսամյակի համար սահմանված ուսման վարձավճարը վճարել 4 ամիսների ընթացքում՝ հավասարաչափ մասերով (1-ին կիսամյակում՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին, 2-րդ կիսամյակում՝ փետրվար, մարտ, ապրիլ, մայիս ամիսներին), բացառությամբ 1-ին կուրսի 1-ին կիսամյակի և ավարտական կուրսի վերջին կիսամյակի համար սահմանված վարձավճարի:

1.2. Ուսանողը պարտավոր է ընթացիկ ամսվա համար սահմանված ուսման վարձավճարի համապատասխան մասը վճարել ԵՊՀ բանկային հաշվեհանամարին՝ մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը:

2. Ուսանողների հետ կնքված ուսումնառության կազմակերպման պայմանների վերաբերյալ պայմանագրի 3.2.7. կետի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«3.2.7 Վճարովի համակարգում սովորող ուսանողն իրավունք ունի կիսամյակի համար սահմանված ուսման վարձավճարը վճարել 4 ամիսների ընթացքում՝ հավասարաչափ մասերով (1-ին կիսամյակում՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին, 2-րդ կիսամյակում՝ փետրվար, մարտ, ապրիլ, մայիս ամիսներին), բացառությամբ առաջին կուրսի վճարովի համակարգ ընդունված ուսանողների, ովքեր պարտավոր են առաջին կիսամյակի ուսման վարձավճարը վճարել դասերի փաստացի սկզբից ոչ ուշ, քան 2 շաբաթվա ընթացքում:

3. Ավարտական կուրսերի ուսանողները պարտավոր են ուսումնառության վերջին կիսամյակի համար սահմանված ուսման վարձավճարը վճարել մինչև ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի նախապաշտպանությունը:

4. Տվյալ ամսվա համար սահմանված չափով կամ ժամկետում ուսման վարձավճարը չվճարելու դեպքում ուսանողը կարող է հեռացվել ԵՊՀ-ից:

5. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ուսանողներին, ֆակուլտետների ղեկաններին (ինստիտուտների, կենտրոնների տնօրեններին) և հաշվապահությանը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր՝

Ա. Ա. Սիճոնյան